

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԿԱՆՈՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՅՑՈՒՄ

### *Գևորգ Ղուշյան*

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարին ունեցել է տարբեր մեկնակետեր՝ գարնանային և աշնանային օրահավասարները, ամառային և ձմեռային արևադարձները, որոնք ժողովրդական կենցաղում մի շարք գործառույթներից զատ, կարգավորել են նաև աշխատանքային տարեշրջանը:

Տարին, ըստ տոմարական հաշվակերպի, լինում է երկու տեսակ.

ա) Արեգակնային. երբ Երկիրը Արեգակի շուրջը մեկ լրիվ շրջան է կատարում՝ 365 օրվա, 5 ժամվա, 48 րոպեի, 50 վայրկյանի և 6 մասներորդի ընթացքում:

բ) Քաղաքացիական տարի. հաշվվում է 365 օր, իսկ 4 տարին մեկ անգամ նահանջ է, որը գոյանում է չորս տարվա ընթացքում չհաշվարկված ժամերից, րոպեներից ու վայրկյաններից (դա կազմում է 24 ժամ՝ մեկ օր):

Այս տարիներից բացի (չխոսելով լուսնային տարվա մասին), կա նաև եկեղեցական տարի, որը ենթադրում է հաստատուն տոմար: «Կան տեղի ունակա՞ն տօներ եւ սուրբերու յիշատակներ, որոնք կապված են որոշ օրերու», - գրում է Ն. Ակինյանը<sup>1</sup>:

Հունվարի 1-ը, որպես քաղաքացիական տարեսկիզբ, ընդունվել է Հուլիոս կայսեր օրոք՝ մ.թ.ա. 45 թ.: Դարերի ընթացքում այն որդեգրել են տարբեր ժողովուրդներ և պետություններ՝ որպես պետական-քաղաքացիական տարվա սկիզբ<sup>2</sup>:

Հայոց մեջ տարբեր ժամանակներում մշակված տոմարական համակարգերում տարեսկիզբ են ընտրվել տարբեր մեկնակետեր<sup>3</sup>: Ժողորդա-

<sup>1</sup> Ն. Ակինյան, Քննություն Ս. Սահակի վերագրուած կանոններու եւ հայոց եկեղեցական տարին է դարու սկիզբը, մատենագրական հետազոտութիւններ, հ. Ա, Վիեննա, 1950, էջ 81:

<sup>2</sup> Ս. Մկրտչյան, Հայոց տոնաձիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 25:

<sup>3</sup> Բ. Թումանյան, Հայ աստղագիտութեան պատմություն, (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբ), Երևան, 1964, էջ 75, 101, 103, 106:

կան տոնացույցում պատկերն այլ է: Օրինակ՝ Արևմտյան Հայաստանի շատ բնակավայրերում տարեմուտ համարվել է ոչ թե Կաղանդը, այլ Սուրբ Ծնունդը<sup>1</sup>: Այսինքն՝ ժողովուրդն ընդունել է եկեղեցական տարեսկիզբը:

Սահակ կաթողիկոսի խմբագրած Տոնացույցում տարին սկսվում է հունվարի 6-ից՝ Ծննդյան տոնից<sup>2</sup>: Սիմեոն Երևանցին 1759 թ. կազմում է «Փօքր թվական նորոյ տօմարիս», որտեղ տարեսկիզբ է ընտրում հունվարի 6-ը<sup>3</sup>: Հետագայում՝ 1807 թ., Մինաս Կամսարականի կազմած տոմարում ևս տարեսկիզբ է դրվում հունվարի 6-ը<sup>4</sup>:

Մինչև 1924 թ., Հայաստանյայց եկեղեցին ղեկավարվում է Հին (Հուլյան – Գ. Ղ.) տոմարով: 1923 թ. Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը հրահանգում է անցնել Նոր՝ Գրիգորյան տոմարի, որը 1924 թ. հունվարի 1-ից ներդրվում է Հայոց եկեղեցական տարվա հիմքում<sup>5</sup>:

Եկեղեցական օրացույցի նպատակն էր ժողովրդի տոնաձիսական մտածողության մեջ նոր գաղափար և աշխարհընկալում ներդնել: Այդ իսկ պատճառով եկեղեցական տոները, որոնք Հիսուսի տնօրինական նպատակի և սուրբգրային անձանց հետ էին կապված, պետք է իրենց խորհրդով և տրամաբանական ու ժամանակային կապերով միավորեին նախաքրիստոնեական պաշտամունքային հավատալիքները քրիստոնեական գաղափարախոսության հիմնական դրվագների հետ, որոնց միջոցով ժողովրդին հնարավոր էր մատուցել տոնի խորհուրդը:

Հիսուսի Ծնունդը նկարագրող Մատթեոսի և Ղուկասու Ավետարաններում նշված չեն ծննդյան տարեթիվը և օրը: Ուստի՝ ուսումնասիրողները, հիմնվելով Ավետարանների հարակից տեղեկությունների, ինչպես նաև պատմական տվյալների վրա, փորձել են դրանք վեր հանել: Ըստ մի տարբերակի՝ Քրիստոսի Ծնունդը վերագրվում էր մ.թ.ա. 5 թ. վերջին կամ 6 թ., քանզի Հռոմի հրամանով մարդահամարն անցկացվելու էր մ.թ.ա. 9-8 թթ., բայց հրեաների դիմադրության պատճառով հետաձգվել է և անցկացվել մ.թ.ա. 7-6 թթ.: Սըր Ու. Մ. Ռամսեյը պնդում է, որ դա Ղուկասի՝ Քրիստոսի Ծննդյան առնչությամբ վկայակոչած նույն մարդա-

<sup>1</sup> **Լ. Սիմոնյան**, Տոմարային ծիսաշար, Տոմար. Ձմեռ. Նորի տարի և Սուրբ Ծնունդ, հ. Ա, Երևան, 2006 էջ 90:

<sup>2</sup> **Ռ. Վարդանյան**, Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, էջ 40:

<sup>3</sup> **Բ. Թումանյան**, նշվ. աշխ., էջ 107:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>5</sup> **Գ. Սերայդարյան**, Եկեղեցական տոմարագիտություն, Էջմիածին, 2003, էջ 120:

համարն է (Ղուկ., Բ 1-3): Հետևաբար՝ ելնելով այս մարդահամարի տվյալներից՝ Քրիստոսի Ծնունդը հարկ է վերագրել մ.թ.ա. 6 թ-ին<sup>1</sup>:

Ըստ այս աղբյուրի՝ Հիսուսի Ծնունդը եղել է Հուլիոս Կեսարի և Էմիլիոս Պողոսի հյուպատոսության տարում՝ մ.թ. 1 թ.: 254 թ.-ի ժամանակագրության մեջ գրված է. «Այս հյուպատոսների օրոք՝ մինչև հունվարի ամսամուտի VIII օրը՝ XV լուսնի ուրբաթ օրը, ծնվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսը», այսինքն՝ դեկտեմբերի 25-ին<sup>2</sup>:

Քրիստոսի Ծննդյան թվականի (մեր թվականության) հիմքում ընկած հաշվարկն արվել է 525 թ. հռոմեացի վանական, պապական արխիվապահ Դիոնիսիոս Կրտսերի կողմից<sup>3</sup>: Նա, հավանաբար, օգտվել է 354 թ. կազմված ժամանակագրական հավաքածուի (Chronographus aani CCCLIII) տվյալներից<sup>4</sup>: Նրա հաշվարկի հիմքում ընկած է եղել 532 պարբերաշրջանը: Հռոմեական Եկեղեցին Քրիստոսի թվականը գործադրության մեջ դրեց VIII դ.<sup>5</sup>: Հայերը ևս այն օգտագործեցին VIII դ. կեսերից<sup>6</sup>:

Հայ գիտական միտքը, սկսած Շիրակացուց մինչև մեր օրերը, ներկայացրել է Ծննդյան թվականի և օրվա իրենց տարբերակները:

Ահա դրանցից մեկը. Գ. Սիմոնյանը, ուսումնասիրելով Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տումարիս հայկազեան» ժողովածուի «Ազգաց ազնուականոններ» բաժինը, Անանիա Շիրակացու «Ի Յայտնութեան Տեառն» ճառը, Հովհաննես Սարկավազի հաշվումները, կարծիք է առաջադրել, որ Հայոց մեծ թվականի համակարգով մ.թ. 1 թ. Քրիստոս եղել է մեկ տարեկան, իսկ Ծնունդը եղել է մ.թ.ա. 1 թ.<sup>7</sup>:

Այսպիսով, Քրիստոսի Ծննդյան տարեթվի հետ կապված կարծիքները տարբեր են և տատանվում են մ.թ.ա. 6-ից մինչև մ.թ. 1 թ.-ի սահմաններում:

<sup>1</sup> Ն. Վասիլիադիս, Աստվածաշունչ և հնագիտություն, Ս. Էջմիածին, 2014, էջ 420:

<sup>2</sup> Monumenta Germaniae Historia. Auctorum Antiquissimorum. Berolini. 1892, IX, [www.wikipedia.org](http://www.wikipedia.org): Վերցված է՝ 14.01.2017, ժամը՝ 14.12:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Գ. Սերայդարյան, նշվ. աշխ., էջ 117:

<sup>6</sup> Բ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 117:

<sup>7</sup> Գ. Սիմոնյան, Քրիստոսի Հայտնության տոնը և նրա ծննդյան թվականը, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 7-14:

Այժմ անցնենք Հիսուսի Ծննդյան օրվա հարցի քննարկմանը: Աստվածհայտնության տոնը գաղափարապես համընկնում էր և՛ Սուրբ Ծնունդին, և՛ Մկրտությանը: Ընդհանրական Եկեղեցին տարեսկիզբ է ընդունել Հիսուս Քրիստոսի Ծննդյան օրը, որը որոշ եկեղեցիներ համարում են դեկտեմբերի 25-ը, մյուսները՝ հունվարի 6-ը<sup>1</sup>: Այդ ամսաթվերի՝ Հիսուսի Ծննդյան օր լինելու հետ կապված կան տարբեր մոտեցումներ, որոնք բխում են հաշվումների տարբեր սկզբնակետերից:

Երկրորդ դարից սկսած՝ Ընդհանրական Եկեղեցին հիմնական մեկնակետ է ունեցել այն, որ գլխավոր տոների ժամանակը բոլոր եկեղեցիներում պետք է նույնը լինի<sup>2</sup>: Դեկտեմբերի 25-ն առաջին անգամ հիշատակվել է Սեքստոս Հուլիոս Ափրիկանոսի՝ 221 թ. գրած տարեգրությունում<sup>3</sup>:

Դեկտեմբերի 25-ը՝ որպես «Հուլայի Բեթղեհեմում Քրիստոսի Ծնունդ», հիշատակվում է նաև 354 թ. ժամանակագրությունում<sup>4</sup>, որը հիմնվում է 336 թ.-ից սկիզբ առնող օրացույցի վրա: Նույն օրն այնտեղ նշված է հռոմեական աշխարհիկ N (atalis) Invicti տոնը: Այս համեմատաբար ուշ վկայությունը հեղինակին թույլ է տալիս ենթադրել, որ Սուրբ Ծնունդը հետնիկիական տոն է՝ հաստատված որպես պատասխան Dies natalissolis invicti-ին (Անհաղթ արևի ծննդյան օր), որը սահմանվել է 274 թ. Ավրելիանոս կայսեր կողմից<sup>5</sup>:

Հռոմի Եկեղեցին 336-ին, որպես Հիսուս Քրիստոսի Ծննդյան օր, ըն-

<sup>1</sup> Տեղին է նշել, որ Հին աշխարհում հունվարի 6-ը եգիպտացիների, հատկապես գնուտիկների շրջանում, էոն աստվածության ծննդյան տոնի օրն էր: Նա հանդես էր գալիս որպես ժամանակի մարմնավորում, իսկ գլխին ուներ արև-լուսապակ: Քրիստոսի Ծնունդով այն նոր ընկալում է ձեռք բերում՝ վերածվելով Միաձնի Ծննդյան տոնի (տե՛ս **L. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 19-20):

<sup>2</sup> **Հ. Յ. Գ.**, Հիմնական տարբերություն Կաթոլիկ և Էջմիածնական դասանութանց, Կ. Պոլիս, 1864, 27-80:

<sup>3</sup> **Hans J.** Hillerbrand Christmas // Encyclopædia Britannica (անգլ.), [www.wikipedia.org](http://www.wikipedia.org): Վերցված է՝ 14.01.2017, ժամը՝ 00.12:

<sup>4</sup> **Andrew McGowan**, «How December 25 Became Christmas», Get Biblical archaeological Review Автор - PhD, ректор и президент Тринити-колледжа Мельбурнского университета), [www.wikipedia.org](http://www.wikipedia.org): Վերցված է՝ 14.01.2017, ժամը՝ 14.16:

<sup>5</sup> **Spinks, Bryan D.**, The growth of liturgy and the church year // Cambridge History of Christianity: Vol. 2. Constantine to c. 600. Cambridge University Press, 2008. P. 615, [www.wikipedia.org](http://www.wikipedia.org): Վերցված է՝ 14.01.2017, ժամը՝ 14.30:

դուներ է դեկտեմբերի 25-ը, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ը: Այդ մասին տեղեկանում ենք հռոմեական եկեղեցու Ֆիլոկալյան կոչվող օրացույցից<sup>1</sup>:

Այդ որոշումն ուներ քաղաքական, բարոյական և տոմարագիտական որոշ պատճառներ: Հեթանոսներն այդ օրը տոնակատարում էին արևի չաստված Միհրի տոնը: Հիսուսի՝ կենդանի արեգակի Ծննդյան տոնն իր խորհրդով վերափմաստավորում էր արևադարձային այդ շրջանը:

Քրիստոսի Ծնունդը դեկտեմբերի 25-ին սկսեցին տոներ նախ՝ Արևմուտքում, ապա՝ Արևելքում: Արևելքում, մինչև IV դ., Ծննդյան տոնը կապվել է Աստվածհայտնության՝ Մկրտության տոնի հետ, որը նշվել է հունվարի 6-ին: IV դ. վերջին՝ Նիկիայից 50 տարի անց, որտեղ կարգավորվել էր Ջատիկը տոներու հարցը, Հռոմի քահանայապետն առաջարկել է Արևելքում ևս Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոներ<sup>2</sup>:

Հովհան Ոսկեբերանը 386 թ. արտասանած իր Մկրտության ճառում հայտնում է, որ տասը տարի է, ինչ Անտիոքում (սակայն ոչ բոլոր եկեղեցիներում) Ծննդյան տոնը կատարում են դեկտեմբերի 25-ին: Իսկ Ս. Փիղոգոնիոս (Ֆիլոգոնիոս) Անտիոքացու նահատակության տարելիցի առթիվ քարոզ խոսելիս ազդարարում է, թե այս տարի՝ 386-ին, Հիսուս Քրիստոսի Ս. Ծնունդը պետք է նշվի դեկտեմբերի 25-ին<sup>3</sup>:

397/81 թթ. Գրիգոր Աստվածաբանի՝ Կ. Պոլսում արտասանած ճառերը՝ Ծննդյան և Մկրտության տոների առթիվ կարող են ենթադրել տալ, թե այդ ժամանակ այնտեղ Ծնունդը սկսել են տոներ դեկտեմբերի 25-ին<sup>4</sup>: Ալեքսանդրիայի եկեղեցին Ծնունդը դեկտեմբերի 25-ին սկսել է տոներ 433 թ.՝ Կյուրեղ Ալեքսանդրացու ժամանակ, իսկ Երուսաղեմի եկեղեցին՝ 549 թ.-ին<sup>5</sup>:

Հին Արևելյան եկեղեցիները շարունակել են Ծնունդը տոներ միասնաբար՝ հունվարի 6-ին: Սա հաստատվում է բազմաթիվ փաստերով.

ա) Հովհաննես Կասիանոս վանականը (V դ.) հունվարի 6-ին Եգիպտոսում ներկա է գտնվել կրոնական արարողությունների, նաև Փրկչի Ծննդյան տոնակատարությանը:

<sup>1</sup> Ե. Պետրոսյան, Քրիստոսի Ծննդյան տոնը հունվարի 6-ին տոներու հայ եկեղեցու ավանդությունը, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 1986, 2, էջ 25:

<sup>2</sup> Հ. Յ. Գ., նշվ. աշխ., 27:

<sup>3</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 25:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

- բ) Ս. Եփրեմ Խուրի Ասորին (IV դ.) հիշատակում է, որ Միջագետքի եկեղեցին Ս. Ծնունդը նշում է հունվարի 6-ին:
- գ) Կ. Պոլսի եկեղեցում, մինչև 379 թ., Ս. Ծննդյան կամ Աստվածհայտնության տոնը կատարվել է հունվարի 6-ին:
- դ) Կապադովկիայում, մինչև 380 թ., Աստվածհայտնությունը նշվել է հունվարի 6-ին, ինչպես երևում է Գրիգոր Նյուսացու՝ Ս. Բարսեղի մահվան առթիվ ասված դամբանականից:
- ե) Անտիոքում նույնպես, մինչև 386 թ., տոնը կատարվել է հունվարի 6-ին:
- զ) Ղազար Փարպեցին (V դ.) ևս հիշատակում է, որ հայերը կատարում են «Փրկչի տոները», նկատի ունենալով Ս. Ծնունդը և Ս. Հարությունը:

Ըստ Ա. Մանուկյանի՝ հնարավոր չէ մեջբերել բոլոր վավերագրումները հոգուտ այն բանի, որ սկզբնական շրջանում Քրիստոնեական եկեղեցին Աստվածհայտնությունը տոնախմբել է հունվարի 6-ին:

Նախնական եկեղեցիների կողմից հունվարի 6-ը որպես Փրկչի Ծննդյան և Մկրտության միասնական տոնախմբման օր նշելը վկայվում է մեկ այլ ծանրակշիռ հետազոտմամբ, որը Շ. Ռընուի «Աստվածհայտնության տոնը Երուսաղեմում Դ և Ե դարերում՝ ըստ Երուսաղեմի հայկական Ճաշոց գրքի»<sup>2</sup> ուսումնասիրությունն է: Այն փաստում է, որ Երուսաղեմի Մայր եկեղեցում Աստվածհայտնության տոնը կատարվել է հունվարի 6-ին: Հեղինակը մանրազնի թննության է ենթարկել հիշյալ տոնի ծիսակարգերն ու տեքստերը, որոնք առանձնակի նշանակություն ունեն Երուսաղեմի Մայր եկեղեցու ծիսակարգի կառուցվածքի և պատմության ուսումնասիրման համար 385-440 թթ. ժամանակահատվածում:

Շ. Ռընուն հարցը պարզաբանելու համար կիրառում է հիմնականում երկու վկայաթուղթ՝ «Itinerarium Egeriae»<sup>3</sup> և հայկական հին Ճաշոցի ներ-

<sup>1</sup> Ա. Մանուկյան, Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994, էջ 38:

<sup>2</sup> Շ. Ռընու, Աստվածայտնութեան տօնը Երուսաղեմում Դ եւ Ե դարերում՝ ըստ Երուսաղեմի հայկական Ճաշոց գրքի, «Գանձասար» աստուածաբանական հանդես, Երեւան, 1996, թիվ 2, էջ 160-179: Հեղինակն այս թեմայով զեկույց է կարդացել 1964-ին Փարիզի ուղղափառ ինստիտուտի՝ պատարագի ուսումնասիրություններին նվիրված XI սեմինարի ժամանակ:

<sup>3</sup> «Itinerarium Egeriae», Editio critica, Cura et studio Aet. Franceschini-Weber, Turhnhout, 1958.

կայուն հայտնի ձեռագրերը՝ նշելով, որ հայերեն տարբերակով պահպանված Երուսաղեմյան Ճաշոցը շատ ավելի վաղ է կազմվել, քան դեկտեմբերի 25-ը՝ որպես Ծննդյան տոնը ընդունելը (պահպանված հնագույն ձեռագիրը 1192 թ. Մաշկևորի վանքի ընդօրինակությունն է)<sup>1</sup>: Ուստի այն պատկերացում է տալիս առավել վաղ կատարված ծիսական արարողությունների և դրանցով պայմանավորված քրիստոնեական-մեկնաբանական մտքի յուրահատկությունների, Հայ Եկեղեցու կողմից ընդունված տոնացույցերի, Ծննդյան արարողակարգի աստվածաշնչյան համապատասխան ընթերցվածների կիրառման վերաբերյալ:

Ըստ Ռընուի դիտարկումների, որոնք և վավերացվում են տարբեր աղբյուրներով, Աստվածհայտնության (Սուրբ Ծննդյան և Մկրտության) ծիսական արարողությունները սկսվել են հունվարի 5-ի երեկոյան: Երուսաղեմի և Բեթղեհեմի հոգևորականներն ու հավատացյալները, Հովվանոց կոչված վայրում հավաքվելով, արարողությունը սկսել են ԻԲ սաղմոսով (հայերեն սաղմոսարանով՝ ԻԳ)՝ «Տէր հովեսցէ զիս», երգել ՀԹ (հայերենով Ձ) սաղմոսը՝ «Որ հովուեսդ Իսրայելի...», այնուհետև ընթերցվել է Ղուկասի Ավետարանից այն հատվածը, որտեղ ասվում է. «Եւ հովիք էին ի տեղոջն յայնմիկ բացօթեագք..., Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա...» (Ղուկ., Բ 8-20):

Արարողակարգը շարունակվում է հոգևորականների և հավատացյալների այցելությամբ ի Բեթղեհեմ՝ Սուրբ Ծննդյան քարայրը, սաղմոսներ երգելով և ընթերցելով Մատթեոսի Ավետարանից Հիսուսի Ծննդյան մասին հատվածը (Մատթ., Ա 18-20): Քարայրից հետո ծեսն ընթացել է Սուրբ Ծննդյան եկեղեցում գիշերային ժամերգությամբ և Ս. Պատարագով, որից հետո Երուսաղեմի կրոնական համայնքը, բաժանվելով Բեթղեհեմի համայնքից, վերադարձել է Երուսաղեմ՝ երգելով «Օրհնեալ ես Դու, որ Տիրոջ անունով պիտի գաս» (Սղմ., ՃԺԷ 26):

Աստվածհայտնության տոնը շարունակվել է հունվարի 6-ի առավոտյան և տևել ութ օր՝ ըստ էության շարունակելով բացահայտել հունվարի

<sup>1</sup> ԵՂՄ, ձեռ. 121, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմ.՝ Ն. Պողարեան, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 338-352: Փարիզի ազգային գրադարան, ձեռ. 44 (X դ.). R. Kevorkian, A. Ter-Stepanian, Manuscripts armeniens de la Bibliotheque national de France, Paris, 1998, p. 84-85: F. C. Conybeare, Rituale Armenorum, Oxford, 1905, էջ 507-527:

5-ի լույս 6-ի գիշերը՝ ճրագալույցին, դրսևորված Ս. Սպասման (Քրիստոսի Գալստյան սպասման) Փրկչական խորհուրդը: Ապա քրիստոնյա համայնքն այցելել է Քրիստոսի Ծննդյան և Աստվածհայտնության խորհրդի հետ կապված բոլոր այն վայրերը, որոնք նկարագրվում են Ղուկասի Ավետարանում:

Հունվարի 5-ից մինչև 13-ը (8 օր) ընթերցվող ավետարանական տեքստերի և երգերի (սաղմոսների) մասին առավել լիակատար պատկերացում են տալիս հայկական Ճաշոցները: Այդ ընթերցվածների և երգերի շնորհիվ մարդու գիտակցության մեջ ներդրվում է Սուրբ Ծննդյան խորհուրդը, քանի որ Քրիստոսի Ծնունդով, այսինքն՝ մարդեղությանը, բացահայտվեց կամ հայտնվեց աստվածային շնորհը: Տեքստերից յոթը, որ վերցված են Եսայու և Միքիայի մարգարեություններից, ակնարկում են Մեսիայի Ծնունդը և Նրա շնորհիվ հիմնված Երկնքի Թագավորությունը, իսկ զատկական տոնին վերաբերվում են հատուկ ընթերցվածներ (աշխարհի արարչագործությունը (Ծննդոց, Ա, Գ 20), Կարմիր ծովում Փարավոնի զորքերի խեղդվելը և իսրայելացիների հաղթական օրհներգը (Ելք, ԺԴ 24-ԺԵ, 21), Նաբուգոդոնոսոր արքայի ոսկե արձանակուռքի կառուցումը և կրակի հնոցը նետված երեք մանկանց օրհներգությունը (Դանիել, Գ 1-20):

Ըստ Խոսրովիկ Թարգմանչի (VII դ.)՝ հայերը Աստվածհայտնությունը և Մկրտությունը նույն օրն են տոնում, Աստվածհայտնությունը՝ ըստ գրքերի (գրվածքի)<sup>1</sup>, իսկ Մկրտությունը՝ ոչ ըստ գրավոր որևէ կանոնի, այլ ըստ բանավոր ավանդության<sup>2</sup>:

Քննարկելով Երուսաղեմի Մայր Եկեղեցում կատարվող Աստվածհայտնության տոնի ծիսակարգը՝ Շ. Ռընուն անում է հույժ կարևոր եզրահանգումներ.

ա) Այն ամենը, որ մեզ մատուցում և բացահայտում է հայկական հին

<sup>1</sup> Գրեք ասելով՝ նկատի է առնվում Երուսաղեմյան Տոնացույցը, որը չունի Մկրտությունն ակնարկող որևէ ընթերցվածք:

<sup>2</sup> Բազմաթիվ արդիական հետազոտությունների համաձայն՝ ս. Կույս Մարիամին ավետելու և նրա այցի հետ կապված ընթերցվածները Աստվածհայտնության արարողակարգում մուտք են գործել Եփեսոսի տիեզերածողովից (341 թ.) հետո, մինչդեռ Երուսաղեմյան ծիսակարգում ընդգծվել կամ ցայտունացվել է Փրկչի մարդեղության խորհուրդը՝ «չակնարկելով Քրիստոսի Մկրտության խորհուրդը» (տե՛ս Շ. Ռընու, նշվ. աշխ., էջ 64):



Ճաշոցը, մեծ արժեք ունի հունվարի 6-ի երուսաղեմյան տոնի պատմության լուսաբանման համար:

բ) Հայկական Ճաշոցը, որը Երուսաղեմի հունարեն Ճաշոցի թարգմանությունն է՝ հավելված հետեփեսոսյան ներմուծումներով, միանգամայն ճշգրիտ է թարգմանում հունարեն Σωφαια բառը՝ իբրև հայտնություն, որը «բացառիկ կերպով է արտահայտում տոնի խորհուրդը՝ Քրիստոսի մարմնով երևալը (ընդգծումը՝ Գ. Ղ.), բոլոր այն իրադարձություններով հանդերձ, որ ավետարանիչները մատուցում են այդ խորհուրդի հետ միասին»<sup>1</sup>:

Հայ մատենագրության մեջ Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին տոնելու մասին առաջին անգամ հանդիպում ենք «Յովհաննու Հայոց կաթողիկոսի ի Յայտնութին Քրիստոսի» գրության մեջ<sup>2</sup>: Հետագայում Հովհաննես Գաբեղենացին «Յովհաննու Հայոց կաթողիկոսի ի Յայտնութին Քրիստոսի»<sup>3</sup>, Ստեփանոս Սյունեցին<sup>4</sup>, Անանիա Սանահնեցին «Վասն նի Ծննդեան Քրիստոսի»<sup>5</sup>, Պողոս Տարոնացին<sup>6</sup>, Ներսես Շնորհալին<sup>7</sup>, Մխիթար Գոշը<sup>8</sup>, Ստեփանոս Օրբելյանը<sup>9</sup>, Մովսես Երզնկացին<sup>10</sup>, Գրիգոր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 178-179:

<sup>2</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 25: Ե. Պետրոսյանը, ելնելով այն հանգամանքից, որ «Գիրք թղթոց» ժողովածուում նշված թուղթը Հովհաննես Բ կաթողիկոսի թղթերի շարքում է, կարծում է, որ դրա հեղինակը Հովհաննես Բ Գաբեղենացին (557-574 թթ.) է (տե՛ս նույն տեղում, էջ 25):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 25: Աղբյուրը՝ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 85-89:

<sup>4</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 26: Աղբյուրը՝ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի, Մեծի իմաստասիրի, Պատասխան ի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաատոյ գրեալն էր Գիրք թղթոց, էջ 323-334:

<sup>5</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 26:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 26: Թուղթ երանելոյն Պողոսի Տարոնացոյ յաղթօղ ախոյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոփիստեայ Հօռոմ փիլիսոփային, Կ. Պոլիս, 1752, էջ 213-237:

<sup>7</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 26: Աղբյուրը՝ Ընդհանրական թուղթք, էջ 94-95, 135-38:

<sup>8</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 26: Աղբյուրը՝ Թուղթք Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր, «Արարատ» ամսագիր, Ս. Էջմիածին, 1900, ԺԱ, էջ 567-568, 1901, էջ 55:

<sup>9</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 26: Աղբյուրը՝ Տեառն Ստեփաննոսի Սյունեաց նախագահ Արիի եպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկրնակաց, Կ. Պոլիս, 1756, էջ 113-131:

Տաթևացին<sup>1</sup> իրենց գրվածքներում ներկայացնում են մի շարք հիմնավորումներ՝ Ծնունդը հունվարի 6-ին տոնելու առնչությամբ:

Անանիա Շիրակացին իր «Անանիա Շիրակցոյ համարաւղի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» ճառում պաշտպանում է Հիսուսի Ծնունդը և Աստվածհայտնությունը միասնաբար տոնելու վերաբերյալ ավանդական տեսակետը: Նա հայտնում է, որ ըստ ս. առաքյալների կանոնների՝ նրանք կարգեցին և սահմանեցին, որ Փրկչի Ծննդյան և Հայտնության տոնը հանդիսանա եկեղեցական տոների գլխավորն ու առաջնեկը և տոնվի Տիրեթ ամսվա 21-ին, որը համապատասխանում է հռոմեական հունվար ամսի 6-ին: Ապա Շիրակացին մեջբերում է Կյուրեղ Երուսաղեմացու կանոնները, որոնցում ասվում է, որ Սուրբ Հայտնության տոնը պետք է կատարել հունվարի 6-ին: Պետք է խմբվեն հավաքատեղում, այսինչ կանոնը կատարեն և ապա գնան Բեթղեհեմի այրը: Շիրակացին կարծում է, որ սա ապացույց է այն բանի, որ երկու տոները մեկ օրում են կատարվել<sup>2</sup>:

Շիրակացին, Չաքարիայի պապանձման հիման վրա հաշվարկ ներկայացնելով, ասում է, որ այն յոթերորդ՝ Թշրին ամսի 10-ին էր՝ քավության օրը, երբ քահանայապետը տարեկան մեկ անգամ մտնում էր սրբություն սրբոցը: Բայց անպատշաճ էր, որ այդ նույն օրը Չաքարիան մերձենար իր կնոջը, որովհետև նա էր այդ տարվա քահանայապետը: Տաղավարահարաց տոնն առջևում էր, որը տոնելու համար հավաքվել էր Իսրայելի ամբողջ ժողովուրդը՝ յոթ օր տոնախմբելու, ուստի տեղին չէր, որ քահանայապետը թողներ ժողովրդին և գնար տուն<sup>3</sup>: Հետևաբար՝ միայն պաշտամունքի օրերը լրանալուց հետո է նա տուն վերադառնում, ինչպես գրված է Ավետարանում: Այդ ժամանակ էլ նրա կինը հղիանում է: Այսպիսով պարզ է դառնում, որ Չաքարիայի պապանձումը եղել է Թշրին ամսի 10-ին, այսինքն՝ սեպտեմբերի 27-ին, իսկ Թշրին ամսի 29-ին, այսինքն՝ հոկտեմբերի 9-ին, մերձեցումը Եղիսաբեթին: Վեց ամիսը հաշվելով 180 օր՝ հասնում է Նիսան ամսի 16-ին, որը համապատասխանում է հռոմեական ապրիլ ամսի 6-ին, երբ եղել է Ավետումը: Դրան գու-

<sup>1</sup> Ե. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 26: Աղբյուրը՝ Մովսեսի հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, 1975, Ա, 31-40:

<sup>2</sup> Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 151:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 156:

մարելով անդրանկաճնության տասնամյա ժամանակը՝ կազմում է 276 օր, որն ավարտվում է Տիրեթ ամսի 1-ին և համապատասխանում հունվարի 6-ին՝ հռոմեական ամսաթվով<sup>1</sup>:

Ներսես Շնորհալին Ալեքս իշխանին ուղղված «Գիր հաւատոյ»- ում փորձում է Ավետարանի տվյալների, մասնավորաբար Քավության տոնին Ջաքարիայի քահանայապետ լինելու և նրա պապանձման երևույթի հիման վրա հիմնավորել, որ Հիսուս ծնվել է հունվարի 6-ին<sup>2</sup>:

Հայոց կանոնագրքում տեղ գտած որոշ կանոններ ևս փաստում են Ծնունդը և Աստվածհայտնությունը մեկ միասնական օրով տոնելու մասին: Այդպիսիք են «Սահմանք կանոնադրութեան երանելոյն Գրիգորի Աստուածաբանի Նազիանզացու եպիսկոպոսի յաղագս ուղղափառութեան հաւատոյ եւ ապաշխարութեան յանցաւորաց»-ի Գ կանոնը<sup>3</sup>, Հովհան դակունու Թ կանոնը<sup>4</sup>, Մանազկերտում 726 թ. գումարված հայ-ասորական համատեղ ժողովի Դ կանոնը<sup>5</sup>: Դվինի 2 ժողովը (719/720 թթ.) մեկ անգամ ևս հաստատում է (26-րդ կանոն, 36-րդ հոդված) Ծննդյան և Ա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 157:

<sup>2</sup> **Գ. Տեր-Վարդանյան**, Ներսես Շնորհալի, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 791:

<sup>3</sup> «Իսկ զայլոց չարահամբաւ ստերիւրեալ յեղափոխուկքն, զորոց ասէ Յովհաննէս, առ ի մէնջ ելին, այլ ոչ էին առ ի մէնջ, զի իշխեցին առ աչալք ասել զճշմարիտ զանքնին ծնունդ Միաձնին, եւ այլք փոփոխել կամելով զառաքելակնիք տան Ծննդեան յերկուս որոշելով՝ ա՛յլ զԾննդեանն եւ ա՛յլ զՅայտնութեանն, անհաւանք մնացեալ առաքելաւանդ կանոնական սահմանացն զոր գրով դաւանեալ ունի եկեղեցի՝ եթէ աւր Ծննդեան եւ Յայտնութեան Փրկչին մերոյ ի միասին տաւնեցի ի Զ-ն յունուարի ամսոյ... եւ... ամենապատիւ լրակցութեամբ եկեղեցոյ՝ միաբան տաւնէ եւ որոշէ որք ոչ այսպէսն ունիցին» (տե՛ս Կանոնագիրք հայոց, աշխատ. Վ. Հակոբյանի, հ. Բ, Երևան, 1971, էջ 183-185):

<sup>4</sup> «Եվ որ զԾնունդն առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան. զի Ծնունդն և Յայտնութիւնն մի են. և յայտ յընթերցուածոյն է, որ ասէ, «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս (Մատթ., Ա 18)» (Կանոնագիրք հայոց, աշխատ. Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 499):

<sup>5</sup> «Զբաժանել զտօն Ծննդեանն ի Յայտնութենէ» (տե՛ս Ա. Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ հանդերձ կանոնագրութեամբք, Վաղարշապատ, 1874, էջ 89):

ստվածհայտնության տոները միասնաբար կատարելու կարգը<sup>1</sup>: Նույնն է ասում «Հիպոդիտեայ Սրբոյ Բան՝ ի Ծնունդն եւ ի Մկրտութիւնն Տեառն, Ա կանոնը (XI դ. վերջ – Գ. Ղ.)<sup>2</sup>, Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ [Եւտրեպիոն] Ա կանոնը (XI դ. - Գ. Ղ.)<sup>3</sup>:

Մ. Օրմանյանը Քավության տոնի և Ջաքարիայի պապանձման հաշվարկը հիմնավոր չի համարում, քանի որ ըստ Ավետարանի՝ Ջաքարիան պարզ քահանա էր Աբիայի դասակարգից, և ոչ թե Ավետարանում հիշված քահանայապետերի կարգից: Իսկ Քավության տոնին տաճարում պետք է պաշտոնավարեր քահանայապետ: Օրմանյանի հաջորդ փաստարկն այն է, որ Թշրինը լուսնային ամիս է և չի համապատասխանում ամեն տարվա արեգակնային ամսվա նույն օրվան: Նա հիշում է նաև Հովսեփի և Մարիամի՝ Նազարեթից ճամփորդելու պարագան, ոչխարների և հովիվների բացօթյա գիշերելու հանգամանքը, որոնք թույլ են տալիս մտածել, որ նշյալ դեպքերը տեղի են ունեցել ավելի մեղմ ու գարնանային եղանակի: Ապա հավելում է, որ ամենահին ժամանակներում առկա է Ծննդյան տոնը ապրիլ կամ մայիս ամիսներին կատարելու հիշատակություն<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է դեկտեմբերի 25-ին, ապա Օրմանյանը գրում է. «Այդ ամսաթիվն ավելի ցայտուն մեջտեղ ելավ, երբ Երուսաղեմում Բեթ-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>2</sup> «Ըստ աւետեաց յիշատակին Թ ամսեայ ծնեալ Տէրն իմ եւ Լ ամեայ մկրտեցաւ ի նմին աւուր ըստ Ղուկայ Աւետարանչին. «Եւ Յիսուս էր ամաց իբրեւ Լ-ից» (Ղուկ., Գ 23 – Գ. Ղ.) Եւ յետ սակաւուց զմկրտութենէն ճառէ. վասն զի աննման էր յայլում աւուր ծնանել բանին Աստուծոյ եւ յայլում մկրտել եւ թերահաատութին ի միջի արկանել, զի զայլ ծնեալ եւ զայլ մկրտեալ խոստովանեցան: Եւ վասն զի Բ որդիս եւ Բ բնութիւնս եւ Բ դէմս խոստովանեցան, եւ այնր աղագաւ Բ տաւս յեղափոխեցին, որք ոչ հնազանդեցան առաքելական հրամանին եւ անհնազանդք էին եւ ուխտադրութք: Իսկ եկեղեցի հաստատեցաւ այսպիսի տաւնիք. ի մի աւուր տաւնել զծննդեան եւ զմկրտութեանն (տե՛ս Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 282- 283):

<sup>3</sup> «Այս գրեցաւ վասն միանալոյ բանին Աստուծոյ ընդ մեզ ծննդեամբ ի սրբոյ Կուսէն, մի յերկուց միացեալ, անշիոթ մնացեալ անորիշ ի միմեանց, միացեալ եւ մի լեալ անքակտելի տաւնեմք ըստ հրեշտակին աւետեաց Թ ամսեայ՝ զծնունդն, Ը արեայ՝ զթլփատութիւնն, Լ ամեայ՝ զմկրտութիւնն, Եւ արեայ՝ զգալն ի տաճարն [ի] լրումն արիւնաց: Եւ պատուել այսպէս. զծնունդն եւ զմկրտութիւնն ի նմին աւուր տաւնել (տե՛ս Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ 285- 286):

<sup>4</sup> **Մ. Օրմանյան**, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, էջ 40-42:

ղեկեմի ուխտագնացությունը Հորդանանի ուխտագնացությունից առանձնացնելու անհրաժեշտություն եղավ, ինչպես նույն ինքը՝ Ոսկեբերան Հայրապետը վկայում է, որ իր օրերից սկսած՝ նորամուտ կարգադրություն է հունվարի 6-ի և դեկտեմբերի 25-ի բաժանումը»<sup>1</sup>: Ամեն դեպքում՝ Օրմանյանը կողմնակից է Ծնունդը հունվարի 6-ին նշելու հարցում Հայ Եկեղեցու որդեգրած ավանդական մոտեցմանը, քանի որ հունվարի 6-ն ավելի հնավանդ է<sup>2</sup>:

Ռ. Վարդանյանի և Լ. Սարգսյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նիկիայի ժողովից (325 թ.) մինչև Անտիոքի ժողովը (341 թ.) ստեղծվել է «Կանոնադրութիւն ընթերցուածոց»-ի երկու տարբերակ: Դրանցից մեկը՝ Երուսաղեմյանը, Անտիոքի ժողովի հայրերը վերագրել են առաքյալներին և ընդունել են՝ իբրև առաջին անգամ համակարգված համաքրիստոնեական տոնացույց, իսկ երկրորդ տարբերակը մերժել են: «Կանոնադրութիւն ընթերցուածոց»-ում Ծնունդը և Հայտնությունը սահմանված են հունվարի 6-ին, իսկ մյուս տարբերակում՝ Ծնունդը դրված էր դեկտեմբերի 25-ին: Ըստ հողվածագիրների՝ դա է հուշում Շիրակացու այն տեղեկությունը, որ Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոնվել է Կոստանդիուսի (337-61 թթ.) արքունիքում: Միայն Հովհաննեսի Աթոռը (Երուսաղեմ) չի ընդունել:

Հողվածագիրները մեջբերում են Անանիա Շիրակացու՝ Կյուրեղ Երուսաղեմացու «Կանոնադրութիւն ընթերցուածոց»-ից արված հղումը, որը Երուսաղեմյան տոնացույցի երկրորդ խմբագրությունն է՝ կատարված 380- 386 թթ., որտեղ դեռևս որոշ քաղաքներում տոնը կատարվում էր դեկտեմբերի 25-ին, այսինքն՝ Արևմտյան Հռոմեական կայսրությունից տեղափոխվել էր Արևելյան Հռոմեական կայսրության որոշ քաղաքներ (Կ. Պոլիս), իսկ Ծննդյան և Հայտնության տոնը հունվարի 6-ին տոնելու կարգը դեռևս գերակշռող էր Արևելյան Հռոմեական կայսրության մեջ: Այդ ավանդույթը շարունակվում է, ինչը ցույց է տալիս համաքրիստոնեական տոնացույցի հայկական տարբերակը՝ թարգմանված և խմբագրված Երուսաղեմի տոնացույցից 422 թ. Սահակ կաթողիկոսի կողմից: Ավանդույթը տևում է մինչև Հուստինիանոս I-ի բռնությունները (553 և 560 թթ.), որոնց ժամանակ հայերին գրած նամակում Երուսաղեմցիները դժ-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>2</sup> Նույն տեղում:

գրում են, թե Հուստինիանոսի կարգադրությամբ ամբողջ Արևելյան Հռոմեական կայսրության տարածքում եկեղեցիները տոները կատարել են դեկտեմբերի 25-ին և փետրվարի 2-ին, բացառությամբ Հայ Եկեղեցու՝ Պարսից տիրապետության տակ գտնվելու պատճառով<sup>1</sup>:

Լ. Սարգսյանը, քննելով Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոների ժամկետների խնդիրը, ուսումնասիրել է 530-ականներից սկսած Հուստինիանոսի (527-565 թթ.) կողմից Բյուզանդական կայսրության տարածքում «Արտեմոնադիր ընթերցուածոց»-ի բռնի ներմուծումը, որով Ծնունդը սահմանված էր դեկտեմբերի 25-ին, Հայտնությունը՝ հունվարի 6-ին և այլն: Նա անդրադարձել է Արևելյան եկեղեցիների, մասնավորապես՝ Հայ Եկեղեցու ցուցաբերած անհամաձայնությանը, որին սակայն, 630-ական թթ. Եզր կաթողիկոսը հարել է: Լ. Սարգսյանը գրել է, որ Անանիա Շիրակացին իր Հայտնության ճառում պաշտպանել է Հայ Եկեղեցու ավանդական դիրքորոշումը: Ավելի ուշ Հովհան Օձնեցին վերականգնել է Ծննդյան և Աստվածհայտնության տոները միասնաբար՝ հունվարի 6-ին տոները հնամենի ավանդույթը<sup>2</sup>:

Հիսուսի Ծննդյան օրվա մեկ այլ, բոլորովին տարբերվող վարկած է առաջադրել ժամանակակից աստվածաբան Ռոբերդ Դ. Մայերսը: Նա գրում է, որ Հիսուսի Ծննդյան ավետարանական նկարագրության մեջ ամսաթիվ չի նշվում: Սակայն Ղուկասի այն հիշատակումը, որ «Դաշտում հովիվներ կային, որոնք գիշերով պահում էին իրենց հոտը» (Ղուկ., Բ 8), ցույց է տալիս, որ Հիսուս ծնվել է կա՛մ ամռանը, կա՛մ վաղ աշնանը, քանի որ Հրեաստանում դեկտեմբերն անձրևային է, հովիվները պետք է

<sup>1</sup> **Ռ. Վարդանյան, Լ. Սարգսյան**, Քրիստոնեական տոները ըստ Անանիա Շիրակացու «Յայտնութեան» և «Ձատկի» ճառերի, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Տարեգիրք, Թ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջ 10-11:

<sup>2</sup> **Լ. Սարգսյան**, Հայոց տոնացույցի ծագումն ու զարգացումը (4-8-րդ դարեր), Երևան, 2010, էջ 8, 24-56, 156-158: Շիրակացին գրում է, որ Հիսուսի Ծննդյան և Մկրտության տոները միասնաբար կատարելը սահմանել են առաքյալները: Դրանից հետո Կերինթոսի (առաքյալների ժամանակակից, ում հետևորդները տարբեր օրերի են տոները Ծննդյան և Մկրտության տոները), աղանդավոր աշակերտներն են այդ տոները բաժանել (տե՛ս **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 148):

փորձեին իրենց անասունների համար ծածկ գտնել<sup>1</sup>: Բայց համաձայն Թալմուդի՝ հովիվները, որոնք պահում էին տաճարի զոհերի հոտերը, դաշտերում էին լինում անգամ Զատկից 30 օր առաջ, այսինքն՝ փետրվարին, երբ Հրեաստանում տեղումների քանակը զգալիորեն բարձր է<sup>2</sup>:

Հիսուս Քրիստոսի Ծնունդն ու Աստվածհայտնությունը ներկայումս Արևմտյան Եկեղեցիները տոնախմբում են դեկտեմբերի 25-ին, իսկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հինավուրց ավանդույթի համաձայն, հունվարի 6-ին է նշում:

Շ. Գալստյանը գրում է, որ Քրիստոսի գալստյան նախապատրաստությունը կատարվեց կրոնական, իմացական, վարչական և աշխարհագրական մարզերում: Կրոնական նախապատրաստությունը կատարվեց Հին Կտակարանով, իմացականը՝ հունական մշակույթով, վարչականն ու աշխարհագրականը՝ Հռոմեական կայսրությամբ<sup>3</sup>:

Աստվածհայտնություն է թե՛ Փրկչի երևան գալը (մարդանալը կամ ծնվելը), թե՛ Մկրտությունը (երբ ի հայտ եկավ Ս. Երրորդությունը՝ եռամեկն Աստված): Ուրեմն՝ Հռոմի Եկեղեցուն ընդդիմանալը, բացի տոմարական հաշվարկից, նախ դավանական – մեկնողական հայեցակերպի խնդիր էր:

451 թ. Քաղկեդոնի ժողովում քննարկվում էր քրիստոսաբանական հիմնական հարցը՝ «մի բնութիւն բանին Աստուծոյ մարդացելոյ» (Կյուրեղ Ալեքսանդրացի), թե՛ երկու բնությունների (մարդկային և աստվածային) միավորում՝ Բանի անձի մեջ. «Հաւատամք եւ մեք ի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս Բան Աստուծոյ, լոյս ի լուսոյ, կեանք ի կենաց, քարոզեալ յերկուս բնութիւնս յետ միաւորութեանն եւ մարմնաւորութեան ի Սրբոյ Կուսէն»<sup>4</sup> (Քաղկեդոն), որը փաստորեն նշանակում է, թե մարդկային անանձ բնությունը (մարդաբանական մինիմալիզմ) անձնավորվում է Աստծո Մի-

<sup>1</sup> Celebrations // Robert J. Myers The Complete Book of American Holidays. - Doubleday, 1972. - ISBN 0-385-07677-0. - ISBN 978-0-385-07677-7, www.wikipedia.org: Վերցված է՝ 14.01.2017, ժամը՝ 11.14:

<sup>2</sup> Лк.2:8-12 // Толковая Библия Лопухина, www.wikipedia.org: Վերցված է՝ 14.01.2017, ժամը՝ 13.28:

<sup>3</sup> Շ. Գալուստեան, Տաղաւար տօներ, Թեհրան, 2009, էջ 20:

<sup>4</sup> Պ. Յովնանեանց, Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ որք յարեւելս գումարեցան, Վիեննա, 1847, էջ 57:

ածին Որդու՝ Բանն Աստծո Անձով: Սակայն, Նիկիայի, Կ. Պոլսի և Եփեսոսի տիեզերաժողովների դոգմաներով և ընդունված Հավատո հանգանակով առաջնորդվող Հայ Եկեղեցու համար սա անընդունելի տեսակետ էր: Մի կողմից՝ քրիստոսաբանական հիմնական հարցի լուծման քաղկեդոնականների անընդունելի տարբերակը, մյուս կողմից նախկին որոշումների վավերացումը (Ծնունդը նշել դեկտեմբերի 25-ին, Աստվածհայտնությունը՝ հունվարի 6-ին) Քաղկեդոնի ժողովի կողմից, Հայ Եկեղեցուն տրամադրեցին ընդդեմ այդ ժողովի, որովհետև Ծննդյան և Աստվածհայտնության առանձնացումներն այլ բան չէին խորհում, քան Քրիստոսի մեջ երկու բնությունների անջատ դրսևորումների արձանագրում: Մյուս կողմից, Հայ Եկեղեցու հաշվարկը հիմնավորվում էր Ղուկասի Ավետարանով, որտեղ ասվում է. «Եւ ինքը Յիսուս շուրջ երեսուն տարեկան էր, երբ սկսեց իր գործունէութիւնը» (Ղուկ., Գ 23): Իսկ դա նշանակում է, եզրակացնում էին հայրերը, որ եթե Հիսուսը ծնվել է հունվարի 6-ին, ապա երեսուն տարի հետո լինում է նույն օրը՝ հունվարի 6-ը, ուրեմն այդ օրն էլ նա մկրտվել է:

Ուրեմն՝ հունվարի 6-ին հավատարիմ մնալն ուներ և՛ դավաբանական – քրիստոսաբանական, և՛ օրացուցային հիմնավորումներ:

(Շարունակելի)

**Բանալի բառեր՝** Օրացույց, Սուրբ Ծննդյան տոներ, Աստվածհայտնություն, Բերդեհեմ, Հայոց եկեղեցի, հունվարի 6, Սուրբ Ծննդյան պահը, Անանիա Շիրակացի:

## УТВЕРЖДЕНИЕ КАНОНА СВ. РОЖДЕСТВА В АРМЯНСКОМ КАЛЕНДАРЕ

**Геворг Гуцян**

**Ключевые слова:** Календарь, Св. Рождество, Богоявление, Вифлеем, Армянская церковь, 6-ое января, Пост Рождества, Анания Ширакаци.

В статье рассматриваются календарные изменения канонів Св. Рождества и Богоявления и Водоосвящения, начиная с IV в. Вселенская Церковь за начало летоисчисления приняла дату рождения Иисуса Христа, которую некоторые церкви празднуют 25-го декабря, другие – 6-го января. Существуют разные подходы к этим датам, которые исходят из разных точек отсчета в опре-



делении дня Рождества Иисуса. Св. Рождеству, как Господскому празднику, предшествуют постные дни, разговение и предпразднство отмечаются накануне, всенощное бдение совершается накануне ночью, поминание усопших – на следующий день. Св. Рождество и Богоявление продолжается восемь дней. Пост Рождества или Явления Христа является последним постом Армянского церковного года. Он начинается 30-го декабря и заканчивается в какой-либо день перед Чрагалуйц (Св. Литургия сочельника). Помимо рождественского пятидневного поста, среди армян был распространен также Пятидесятидневный пост, предшествующий Рождеству.

### THE ESTABLISHMENT OF THE CANON OF NATIVITY IN THE ARMENIAN DIRECTORIUM

*Gevorg Ghushchyan*

**Key Words:** *Directorium, Nativity, Theophany, Bethlehem, Armenian Church, 6 January, fast of Nativity, Anania Shirakatsi.*

The present article discusses the developments of the Holy Birth, Theophany and Blessing of the Water calendar canons starting from the IV c.. The General Church has established the date of the Holy Birth of Christ that according to some Churches is the 25 December and to the others it is 6 January. The different dates of the Holy Birth are due to the fact that the Churches took different starting points in their reckoning. As Tabernacle feast the following celebrations precede the Nativity of the Lord which are the Fasting, Navagatic/Consecration and Nakhatonak (i.e. before the feast), Guarding/ the Eve of Nativity Merelotz/ Paying visit to the tombs of the dead. The Nativity and the Theophany are celebrated for eight days. The fast of the Nativity of the Lord or the Epiphany is the last fasting of the church year. It starts on 30 December and finishes on any day before Jragalooytz/Lucermarium. Apart from the five-day fast of the Nativity there existed the Hisnagats Pahg/Quinquagesima or Advent in the Armenian Church that preceded the Nativity.